Էրիկ Դավթյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 3-րդ կուրս
Գիտ. ղեկ.՝ բ. գ. դ., պրոֆ. Գ. Քեռյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ցեղասպանագիտությունը, ուսումնասիրելով աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցած ցեղասպանությունները, որպես ուսումնասիրության մեթոդ օգտագործում է կոմպարատիվիստիկան՝ համեմատելով դրանք միմյանց հետ: Հայոց ցեղասպանությունը, որը ևս այս գիտության անբաժան մասն է կազմում, այս առումով շատ հետաքրքիր է դիտարկել այլ ցեղասպանությունների հետ համեմատության ներքո, քանզի դա ավելի է օգնում հասկանալ Մեծ եղեռնի էությունը, ինչպես նաև դրա չափերը և դրսևորման տեսակը:

Առանձնացնենք այն սկզբունքները, որոնց հիմքի վրա տեղի ունեցավ Հայոց Մեծ եղեռնը, և համեմատենք այլ ցեղասպանությունների հետ:

Նախ և առաջ ցեղասպանությունը տեղի է ունեցել էթնիկական հիմքի վրա: Սա թերևս բոլորին էլ հասկանալի է, որովհետև, ըստ էության, դրանց մեծ մասը տեղի է ունենում հենց այս սկզբունքի վրա (հրեաների, սերբերի, հույների ցեղասպանությունը և այլն): Աբդուլ Համիդը, ինչպես և նրան հաջորդած երիտթուրքական պարագլուխները, իրականացրին այդ հրեշավոր ծրագիրը Հայկական հարցը լուծելու համար և հայությունը՝ որպես մեկ առանձին ազգ վերացնելու նպատակով:

Մեծ եղեռնը տեղի է ունեցել կրոնական հիմքի վրա: Սրա ամենավառ վկայությունն այն է, որ մոլեռանդ զանգվածներին, մահմեդական մոլաներին, քուրդ ցեղապետներին և ընդհանրապես՝ թուրք չեթեներին ու բաշիբոզուկներին հայերի դեմ էին մղում քրիստոնյա «անհավատների» դեմ պայքարի կարգախոսներով: Ի վերջո՝ քրդերը մասնակից էին դարձել կոտորածներին՝ ելնելով կրոնական պատկանելության խնդրից ու քրիստոնեության նկատմամբ ունեցած ատելությունից: Եթե համեմատենք հայերի ցեղասպանությունը Հոլոքոստի հետ, ապա վերջինս տեղի չի ունեցել կրոնական հիմքի վրա, այլ բացառապես հրեաների՝ որպես ազգի նկատմամբ ունեցած ատելությունից դրդված:

Ցեղասպանության պլանավորման ու իրականացման հարցում կարևոր դերակատարություն է ունեցել բարոյահոգեբանական հիմքը: Օսմանյան կայսրության և ժողովրդի շրջանում XIX դարից սկսեց աստիճանաբար աճել ատելությունը հայ ու հույն ժողովուրդների

նկատմամբ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Օսմանյան կայսրության առևտրատնտեսական կապիտալի զգալի մասը գտնվում էր հայերի ու հույների ձեռքում, ինչը ատելություն էր սերմանում մահմեդական բնակչության շրջանում: Օսմանյան կայսրության արտաքին ու ներքին առևտրի, թուրքական ապրանքների արտահանման ու օտարերկրյա ապրանքների ներմուծման ողջ գործը մեծ մասամբ կենտրոնացել էր արևմտահայության, հրեաների ու հույների ձեռքում: Կայսրությունում ի հայտ են գալիս հայ խոշոր մեծահարուստներ, օսմանյան մեջլիսի պատգամավորներ: Աստիճանաբար առաջանում էր թերարժեքության բարդույթ, քանի որ միշտ պատերազմների ու ավարառության սովոր բնակչությունը երբեք չէր կարող առաջ ընթանալ արվեստի, մշակույթի ու պետական կառավարման ապարատներում: Բացի այդ՝ թուրքերի շրջանում մտավախություն էր առաջանում, որ որոշ ականավոր հայերի դիրքերի ամրապնդումը և մուտքը քաղաքական դաշտ կարող էին ապագայում սպառնալիք դառնալ թուրքական պետականությանը: Այսպես, օրինակ, սուլթանական ճարտարապետության մենաշնորհը պատկանում էր Պալյաններին, ոսկերչության և դրամահատությանը՝ Տյուզյաններին, զինագործությանը՝ Տատյաններին: Ունեցել ենք հանրօգուտ շինանարարության նախարար՝ Գրիգոր Աղաթոն, ինչպես և փայլուն դիվանագետներ՝ Կարապետ Արթին Դավուդյան (Գերմանիայում Օսմանյան կայսրության դեսպան), հյուպատոսներ՝ Մանուկ Ազարյան (Պետերբուրգ), Միհրան Գավաֆյան (Վիեննա), Մինաս Երամ (Նեապոլ) և այլն[1]: Մշակույթի պարագայում հայությունը անգերազանցելի էր, ինչպես և արհեստների տարբեր ճյուղերում: Կար որոշակի ինքնուրույնություն կրթական համակարգում՝ հայկական վարժարանների, դպրոցների և մշակութային միությունների ու թերթերի տեսքով, մի բան, որ այլևս չկար քեմալական Թուրքիայի պարագայում: Այս առումով Հայոց ցեղասպանության հետ որոշակի առնչություն ունի հույների ցեղասպանությունը Օսմանյան կայսրության տարածքում:

Նախորդից բխում է նաև հաջորդ հիմքը՝ տնտեսականը: Հայերի կուտակած հարստությունը թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում մեծ ցանկություն էր առաջացրել քրդերի ու թուրքերի շրջանում բռնի ուժով տիրանալու դրանց: Պատահական չէին այն կարգախոսները, որոնք կոչ էին անում զանգվածներին ,կոտորել գյավուրներին նրանց ունեցվածքին տիրանալու խոստումներովե: Այս հանգամանքը նաև

[1] Տես http://www.armedia.am/?action=ForeignWorld&what=show&id=1247165795&lang=arm:

նկատվում է այլ ցեղասպանությունները դիտարկելիս, բայց անհամեմատ փոքր չափերով:

Հայոց ցեղասպանությունը ունեցել է պարբերական բնույթ: Եթե դիտենք պատմական ժամանակագրությունը, հայոց ջարդերը սկսվել են 1895-1896 թթ., այնուհետև շարունակվել 1908 թ. Ադանայում, ապա 1915 թ. ամբողջ Օսմանյան կայսրության տարածքում, ապա 1917 թ. Արևմտյան Հայաստանում, իսկ 1920 թ.՝ նաև Արևելյան Հայաստանում[1], ինչպես նաև 1918 թ. Բաքվում[2]: 1921-1923 թթ. արդեն քեմալական Թուրքիայի պայմաններում ևս իրականացվեցին հայության մասնակի ջարդեր տարբեր շրջաններում[3]: Մինչդեռ Հոլոքոստը տեղի է ունեցել միայն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, սերբերի ցեղասպանությունը ևս, մասամբ նաև՝ Հարավսլավական պետության փլուզումից հետո, Ռուանդայի ցեղասպանությունը միայն 1994թ., գնչուների ջարդերը՝ 1935-1945 թթ., բոսնիացիների կոտորածը Սրեբրենիցայում 1995 թ. հունիսին և այդպես շարունակ:

Մյուս ասպեկտը դիտավորության հիմքն է: Այս հարցում ցեղասպանությունները կարելի է պայմանականորեն բաժանել երկու տեսակի՝ նախապես պլանավորված և պետական մարմինների քաղաքական ծրագրով նախատեսված ցեղասպանություն, որոշակի հանգամանքներում տեղի ունեցած և չծրագրավորված ցեղասպանություն: Մեծ եղեռնը ակնհայտորեն պատկանում է առաջին դասին, քանի որ Աբդուլ Համիդ II-ի ժամանակներից ոճիրը որպես քաղաքական ծրագիր փոխանցվել է նաև երիտթուրքերին, որպես պաշտոնական նպատակ ամրագրվել 1911 թ. Սալոնիկի ժողովում, ապա նույն կերպ փոխանցվել Մուստաֆա Քեմալին[4]: Հայ ժողովուրդը և Հայաստանը սեպի պես խրվել էին «Մեծ Թուրան» ստեղծվելիք պետություն կերտելու ճանապարհին, ուստի թուրքական քաղաքական վերնախավի տեսանկյունից դիտարկելով՝ հրամայական ու պարտադիր խնդիր էր դարձել բնաջնջել հայությանը այդ «բաղձալի երազին» հասնելու համար: Նույնը չենք կարող ասել, օրինակ, սերբերի ցեղասպանության մասին, որը պլանավորված չէր խորվաթների կողմից, 1990-ական թթ. խնդիր կար տարածքները գրավել ու ազատել սերբերի իշխանությունից, ուստի այլընտրանք չունենալով՝ խորվաթները սկսեցին ներթափանցել գյուղերը և կոտորել խաղաղ բնակչությանը: Ամերիկացիները, կարիք ունենալով ընդարձակել իրենց տարածքները դեպի արևմուտք և նոր պարարտ հող գտնել տնտեսության զարգացման համար, բնավ մտադրություն չեն ունեցել բնաջնջելու հնդկացիներին, պարզապես այլ ձև չունենալով հնազանդեցնելու կամ տիրանալու այդ տարածքներին՝ սկսեցին զանգվածաբար ոչնչացնել հնդկացիներին:

Կա ևս մեկ սկզբունք, որով Հայոց ցեղասպանությունը առանձնանում է մյուսներից: Դա ցեղասպանության կազմակերպման ու իրականացման մեջ Օսմանյան կայսրությունից բացի՝ այլ պետությունների մասնակցության ու աղերսակցության փաստն էր: Եթե Հոլոքոստը ծրագրվել և իրականացվել էր միայն Գերմանիայի կողմից և դատապարտվել մյուս տերությունների կողմից, Հայոց ցեղասպանությունը ծրագրվել էր Օսմանյան կայսրության կողմից, հովանավորվել Գերմանիայի կողմից (մինչ 1915թ. իրադարձությունները երիտթուրքերը ստացել էին Վիլհելմ II-ի աջակցությունը, որն ավելի քաջալերեց նրանց): Այս հրեշավոր արարքին դեմ չէր նաև Ռուսաստանը, որը նույնիսկ պատերազմի մեջ լինելով կայսրության դեմ, թվում է, թե պետք է լիներ ցեղասպանության առաջին իսկ խոչընդոտը, բայց ինչպես հնչում էր 1895-1896թթ. ցարական Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկու կարգախոսը, ռուսներին պետք էր «Հայաստանն առանց հայերի»: Ինչ վերաբերում է Անգլիային ու Ֆրանսիային, նրանք լուռ համաձայնության պայմաններում իրենց թույլտվությունը հայտնեցին, քանզի փայլուն գիտեին, թե ինչ է ծրագրվում իրենց համար կիսագաղութ դարձած այդ պետության իշխող վերնախավում, ուստի փաստ է, որ ոչինչ չարեցին ոճիրը կանխելու համար:

Հայոց ցեղասպանությունը մեզ պատճառեց ոչ միայն մարդկային, այլև նյութական հսկայական կորուստներ: Բռնագրավվեցին հայկական կրթական հաստատությունների գույքը, շենքերը, ոչնչացվեցին ու ավերվեցին բազմաթիվ եկեղեցիներ, խաչքարեր, մշակութային կենտրոններ և այլ ազգային հարստություններ:

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության համատեքստում դիտարկելիս ի հայտ է գալիս մի հանգամանք ևս. հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը ոչ միայն ,Մեծ Թուրանիե ստեղծման առաջին քայլն էր, այլև երիտթուրքերի կողմից իրականացված քայլ, որը նպատակ է ունեցել վերացնել այն կարևոր լծակը, որը մինչ այդ մեծ տերությունները օգտագործում էին իրենց ներքին գործերին միջամտելու և օգուտներ ստանալու համար, այսինքն՝ վերացնել Հայկական հարցը որպես կայսրության ինքնիշխանությունը ոտնահարող երևույթ[1]:

---

[1] Ալեքսանդրապոլի դեպքերը մասնավորապես:
[2] Բաքվի ջարդերի մասին տես http://www.baku.am/top-content-2:
[3] Տես http://akunq.net/am/?p=21016
[4] Բավական է մեջբերել երիտթուրքական պարագլուխների միջև ընթացած քննարկումները, տես **Ռիֆաթ Մ.**, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, 1990, էջ 113-118:

[1] Տես **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 655:

Անդրադարձ կատարենք այն անկյունաքարային հանգամանքին, որ չի նկատվում և ոչ մի այլ ժողովրդի ցեղասպանության մեջ: Մեր պարագայում տեղի ունեցավ մի խոշոր ողբերգություն. բացի գենոցիդից Հայաստանը ենթարկվեց պատրիոցիտի՝ հայրենազրկման, այսինքն բացի այն, որ մեկ ու կես միլիոնից ավել հայ կոտորվեց, մնացածն էլ քշվեց Արևմտյան Հայաստանից, մահմեդականացվեց կամ հափշտակվեց, արևմտահայությունը կորցրեց իր հայրենիքը, կորցրեց այն հողը, որի վրա ապրում էր դարեր շարունակ: Արևմտահայերը այլևս չկարողացան վերադառնալ իրենց տները, քանզի թուրքերը տեսականորեն վերացրեցին էրգիր տանող վերադարձի բոլոր ճանապարհները: Հայերին պատկանող տները բնակեցվեցին քրդերով, չերքեզներով ու թուրքերով, փակվեցին լուսավորական-կրթական հաստատությունները, եկեղեցիները, այսինքն՝ այն ամենը, ինչ մինչ այդ օգնում էր հայությանը պահպանելու իր ազգային ինքնությունը: Հույների ցեղասպանությունը չի հանգեցրել հույների հայրենազրկման, քանի որ տեղի է ունեցել հիմնականում Զմյուռնիայում և Պոնտոսում[1]: Նրանք շարունակում էին ապրել իրենց հայրենիքում, իսկ Հոլոքոստը տեղի ունեցավ Գերմանիայի ու Լեհաստանի տարածքում, այսինքն՝ Իսրայելի սահմաններից շատ հեռու, ուստի, բնական է, խոսք չի կարող լինել հայրենազրկման մասին: Նույն բանը կարող ենք ասել նաև սերբերի ցեղասպանության կամ Ռուանդայի ողբերգական դեպքերի մասին: Սա թերևս այն տարբերակիչ առանձնահատկությունն է, որի պատճառով չի կարելի Հայոց մեծ եղեռնը համեմատել այլ ժողովուրդների ցեղասպանությունների հետ: Ճիշտ է՝ եղել են Հայոց ցեղասպանությունից շատ ավելի մեծ կորուստներ պարունակող սպանդներ, բայց հայության ամբողջ արևմտյան հատվածը այլևս զրկվեց իր հայրենիքում ապրելու ու ստեղծագործելու հնարավորությունից, որը թե՛ տնտեսական, թե՛ բարոյահոգեբանական, թե՛ ժողովրդագրական, թե՛ քաղաքական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար:

Այսպիսով, ամփոփելով պատմահամեմատական վերլուծությունը, հանգում ենք այն եզրակացությանը, որ Հայոց ցեղասպանությունը իր էությամբ, դրսևորման մասշտաբներով շատ ավելին էր, քան աշխարհում տեղի ունեցած ցանկացած ցեղասպանություն, որ առանձին բաղադրիչներ նկատվում են և այլ ժողովուրդների համանման ողբերգություններում, մեկի մոտ՝ շատ, մյուսի մոտ՝ քիչ, բայց որպես ամբողջականություն, որպես մեկ ընդհանուր երևույթ դրանք չեն կարող համեմատվել Հայոց մեծ եղեռնի հետ:

[1] Պոնտոսի ցեղասպանության մասին տես http://news.genocide.ru/2008/05/19/531.htm:

Эрик Давтян

ГЕНОЦИД АРМЯН В КОНТЕКСТЕ ГЕНОЦИДОЛОГИИ

В данной работе представляется геноцид армян в сравнении с другими геноцидами мира, подчеркивая некоторые аспекты, которые отсутствуют у других. В действительности компаративистика является одним из самых эффективных методов изучения исторических явлений. Смысл такого подхода заключается в том, что этот метод позволяет изучить геноцид армян с новой точки зрения. Сравнение геноцида армян с геноцидами других народов дает более или менее обобщенное представление о сущности и реальных масштабах геноцида армян.

Erik Davtyan

ARMENIAN GENOCIDE IN THE CONTEXT OF GENOCIDE STUDIES

In this research Armenian Genocide is presented in comparison with other genocides of the world, underlining some aspects that don't exist in the others. Comparison is one of the most efficient methods for studies in historical events. The essence of that kind of approach is to study Armenian Genocide from a new side. So, the comparison of Armenian Genocide with the genocides of other nations gives an approximately complete notion about the essence and the real size of Armenian Genocide.